ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑԱՇԱՐ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

03.06.2019 11:26



Հարգելի փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը ս. թ. **հունիսի 8-ին և 15-ին** շաբաթ, ժամը 10:00-ին կազմակերպում է «**Փաստաբանների ֆուտբոլի գավաթ 2019**» մինի ֆուտբոլի մրցաշար **«Միկա»** մարզահամալիրի ֆուտբոլի փոքր բացօթյա մարզադաշտում, Շենգավիթ վարչական շրջանի Մանանդյան 41 հասցեում (Գարեգին Նժդեհի հրապարակից 1 կիլոմետր հեռավորությամբ, նախկին Հայէլեկտրո գործարանի հարևանությամբ):

Ֆուտբոլի մրցաշարին կարող են մասնակցել անհատապես կամ թիմային եղանակով: Մինչև սույն թվականի **հունիսի 7-ը** զանգահարեք 010 600 701 հեռախոսահամարին և գրանցվեք՝ հայտնելով Ձեր անունը, ազգանունը, արտոնագրի և հեռախոսի համարները, իսկ թիմով հանդես գալու դեպքում նաև փաստաբանական կամ իրավաբանական գրասենյակի տվյալները, թիմի անվանումը:

Հունիսի 15-ին տեղի կունենան կիսաեզրափակիչ և եզրափակիչ խաղերը: 1-3-րդ տեղերը կպարգևատրվեն թիմային գավաթներով պատվոգրերով և մեդալներով: Մրցաշարից հետո լավագույն խաղացողներից կձևավորվի ՀՀ փաստաբանների պալատի ֆուտբոլի հավաքական թիմը այլ կառույցների թիմերի հետ մրցակցելու համար:

Հարագանքով

ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբի

ղեկավար Վրեժ Խաչիկյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })